ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

8 հունիսի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

82
(2748)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՆ ՍՏԵՂԾԵԼ, ԲԱՅՑ՝ ՄԻԱՅՆ ԹՂԹՈՎ

Դեռ 2019 թվականի հունիսի 24-ին, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ, ստեղծվել է Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ: Ի պաշտոնե այդ խորհրդում հենց վարչապետն է խորհրդի նախագահը, կազմում են ընդգրկված նաեւ փոխվարչապետը, արդարադատության նախարարը, վարչապետի աշխատակազմի ղեկավարը, գլխավոր դատախազը եւ այլք: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ վերջին անգամ այս խորհուրդը նիստ է արել 2023 թվականի փետրվարին Ջերմուկում, որը նախագահել է Նիկոլ Փաշինյանը: Պաշտոնական հաղորդագրության համաձայն՝ քննարկվել էին հայտարարագրման համակարգին, կուսակցությունների ֆինանսական վերահսկողությանը, հակակոռուպցիոն կրթությանը վերաբերող հարցեր: Դրանից հետո այլ որեւէ տեղեկություն այս խորհրդի մասին առկա չէ: Այսինքն՝ ստացվում է՝ դեռ 2019 թվականին ստեղծված խորհուրդը, որի կազմում նաեւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ կան, մի քանի ամիսը մեկ է հավաքվում, քննարկում Հայաստանում կոռուպցիայի իրավիճակը: Քննարկելուց էլ եզրակացնում են, թե ամեն ինչ լավ է, ծրագրերը կատարվել են:

ԱԺ պետահրավական մշտական հանձնաժողովի փակ նիստում ՔՊ խմբակցության պատգամավոր Վլադիմիր Վարդանյանի եւ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Միհեր Սահակյանի միջեւ տեղի ունեցած աղմկահարույց ծեծկռտուքից հետո Սահակյանը չի մասնակցում հանձնաժողովի նիստերին, քանի որ Վլադիմիր Վարդանյանի հետ մինչ օրս լուրջ տարաձայնություններ ունի: «Ժողովուրդ» օրաթերթին խորհրդարանի իշխանական շրջանակներն ասացին, որ պատգամավորը չի մասնակցում հանձնաժողովի նիստերին, բայց դրա դիմաց աշխատավարձը ստացել է առանց պահումների: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Միհեր Սահակյանը, սակայն, այս առիթով ասաց. «Եղել է, որ մասնակցել եմ, եղել է՝ չեմ մասնակցել: Ես իմ գործառույթները, պարտականությունները կատարել եմ: Եղել է, որ գործուղման մեջ եմ եղել, կամ ուրիշ աշխատանքի եմ եղել, բայց նիստերի էլ եմ մասնակցել»: Պատգամավորից հետաքրքրվեցինք նաեւ՝ արդյոք ամբողջական աշխատավարձ ստացել է այդ ընթացքում: «Չեմ նայել, ճիշտն ասած, հատուկ հաշվառում չեմ արել»,- ասաց Սահակյանը: Հիշեցնենք, որ մայիսի 16-ին Միհեր Սահակյանի գործով դատական նիստը հետաձգվել էր: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ նաեւ, որ դատական հաջորդ նիստը կկայանա հունիսի 26-ին:

Ինչպես հայտնի է, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որդու՝ Աշոտ Փաշինյանի ենթադրաբար առեւանգման գործը ուղարկվել է դատարան, եւ մեղադրյալի աթոռին է հայտնվել 44-օրյա պատերազմի հերոսի մայրը՝ Գայանե Հակոբյանը, որը կալանքի տակ է: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ վարչապետի որդու գործով մաս կա անջատված, որով քննությունը ՀՀ քննչական կոմիտեում դեռեւս շարունակվում է: Մեզ հայտնի դարձավ, որ անջատված մասը վերաբերում է մայիսի 17-ին՝ Աշոտ Փաշինյանի ենթադրյալ առեւանգման դեպի օրը դատարանի բակում մյուս զինվորների ծնողների, մասնավորապես՝ Աստղիկ եւ Գարիկ Գալեյանների, Վահիկ Սահակյանի եւ մյուս ծնողների գործողություններին, թե նրանք ինչ են արել, երբ Աշոտ Փաշինյանին տեսել են Գայանե Հակոբյանի մեքենան նստելիս: Ստացվում է, որ նախաքննական մարմինը, այս քրեական գործով քննությունը շարունակելով, այն որպես «մահակ է պահում» զոհված զինվորների ծնողների գլխին՝ հասկացնելով՝ եթե սխալ բան անեն, ապա Գայանե Հակոբյանի նման կհայտնվեն բանտերում:



Մեկ անձից գնումներ կատարելու հարցում վարչապետի աշխատակազմը հետ չի մնում մյուս կառույցներից: Սա նշանակում է, որ առանց մրցույթի իրենց ցանկալի ընկերությունից գնումներ են անում գործադիր մարմնում: Համենայնդեպս, դա են վկայում պաշտոնական տվյալները: Օրինակ՝ Փաշինյանի ղեկավարած կառույցի աշխատակազմը 200 հազար դրամի պայմանագիր է կնքել՝ սննդի մատուցման եւ սպասարկման ծառայությունների համար: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական տվյալներից պարզեց, որ մեկ այլ պայմանագրով էլ «Վինո Վինո» ՍՊԸ-ից 70 հազար դրամով 3 հատ «Նաիրի» կոնյակ են գնել գործադիրում: Վարչապետի աշխատակազմը նաեւ 97 հազար դրամ է ծախսել եւ, ընկերություններից մեկի հետ պայմանագրի հիման վրա, ձեռք է բերել չիր, սուրճ, կոնֆետներ, անձեռոցիկներ: Հարցն այստեղ ամենեւին էլ գումարը չէ, այլ երեւույթը: Այսինքն՝ այն գործելաոճը, ինչ նախկինում մերժում էր Նիկոլ Փաշինյանը, ԱԺ ամբիոնից քննադատում, հիմա նրա աշխատակազմը մեծ հաճույքով իրականացնում է:

ՊԱՐՁԱԲԱՆՈՒՄ

ՆԱԽԱԳԻԾ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Գեւորգ Պապոյանը վերջերս նոր նախագիծ էր հեղինակել, որով առաջարկում է հետեւյալը. բանկը, որից քաղաքացին առաջնային շուկայից հիպոթեքային վարկով բնակարան է գնում, վարկն ամբողջությամբ չպետք է տրամադրի կառուցապատողին, այլ դրա 25 տոկոսը փոխանցի, մնացած 75 տոկոսը վճարի, երբ բնակարանը կառուցվի եւ հանձնվի սեփականատիրոջը:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծն առաջին ընթերցմամբ արդեն իսկ ընդունվել է ԱԺ-ում:

«Ժողովուրդ» օրաթերթը վերջին օրերին դժգոհություններ է ստանում կառուցապատմամբ զբաղվող ընկերություններից, որոնք պնդում են, որ այս նախագիծը մեծ վնաս է հասցնելու կառուցապատման ոլորտին: Կառուցապատողները նշում են, որ եթե գումար չստանան, չեն կարողանա աշխատանքը կատարել: Նրանք մտադիր են մինչեւ անգամ բողոքի ակցիա կազմակերպել՝ ընդդեմ պատգամավորի հեղինակած նախագծի:

Ժողովուրդ օրաթերթը այս առիթով զրուցել է պատգամավոր Գեւորգ Պապոյանի հետ:

-Պարոն Պապոյան, կխնդրեմ մանրամասնել՝ ինչ է իրենից ներկայացնում նախագիծը, ինչու այսքան մեծ աղմուկ բարձրացրեց այն:

-Այսօր Հայաստանում նորակառույց շենքերում մարդիկ բնակարան գնելիս շատ հաճախ բնակարանների գնման իրավունքը գնում են, երբ շենքը դեռ պատրաստ չէ: Օրինակ՝մարդը կարող է շենքի 12 կամ 14-րդ հարկում բնակարան գնել, բայց այդ պահին շենքը կառուցված լինի մինչեւ երկրորդ հարկ: Փաստացի կառուցապատողների 90%-ը երկու եղանակով է աշխատում՝ կամ գումարի մեծ մասը սառած է լինում հաշվին՝ մինչեւ բնակարանը իրենց տան, կամ փուլային ձեւով, այսինքն՝կատարում է 20% աշխատանք, 20%-ը բացում է գումարից եւ այլն: Եվ կան կառուցապատողների խումբ, հիմնականում այդ աղմուկ բարձրացնողներն են, որոնք, ըստ էության, գումարի 100% հասանելիություն են ստանում: Այսինքն՝ օրինակ՝ շենքի 14-րդ հարկում բնակարան եք գնում, ձեզ տունը պետք է տան 2 տարի հետո, բայց կառուցապատողն ամբողջ գումարը այդ պահին վերցնում է: Այս դեպքերում կարող է ռիսկ առաջանալ, որ կառուցապատողը, հնարավոր է, սնանկանա, կամ կառուցապատողը կարող է խաբեությամբ զբաղվել ու շինարարության կեսից դադարեցնել գործընթացը: Հատկապես հիմա, երբ Կենտրոնական բանկը գնահատել է, որ 25% -ով գները ուռճացվել են Հայաստանում, շատ հնարավոր է, որ գանք ուղղակի շուկայական իրավիճակի, եւ որոշ կառուցապատողներ կամ սնանկանան, կամ իրենց գործունեությունը առաջ չգնա: Այս պահին մինչեւ 60.000 շենք է նախատեսվում կառուցել: Որպեսզի մենք մարդկանց այս պահին եւ ապագայում պաշտպանենք, իմ նախագծով մենք առաջարկում ենք, որ 2024 թվականից՝ 30%-ը, իսկ 2025 թվականից 50%-ը սառեցվի այդ գումարի, եւ իրենք այդ գումարների հասանելիությունը ունենան այն ժամանակ, երբ շենքը կառուցած կլինեն: Սա բերելու է նաեւ նրան, որ գները կարող է իջնեն շատ պարզ պատճառով. այսօր նրանք ունեն ամբողջ գումարի հասանելիություն եւ, բնականաբար, կարիք չունեն, այսպես ասած, շատ բնակարաններ վաճառելու, իսկ այն դեպքում, երբ իրենք գումարի մի մասին կունենան հասանելիություն, որպեսզի կարողանան շինարարությունը արագ տեմպերով ավարտին հասցնել եւ ֆինանսավորվել, իրենք պետք է մի փոքր իջեցնեն գները, որպեսզի ավելի շատ վաճառեն:

-Պարոն Պապոյան, կառուցապատողներն ահազանգում են, որ նախագիծը մեծ վնաս է հասցնելու ոլորտին, քանի որ եթե կառուցապատողները չստանան ամբողջական գումարը, չեն կարող աշխատանքը կատարել մինչ վերջ: Դուք այս ռիսկերը հաշվի առե՞լ եք:

-Իրականում այդպիսի ռիսկ չկա: Ուրեմն, կառուցապատողների մեծ մասը գումարի 30-50%-ը այսօր ստանում է, եւ նրանց մոտ որեւէ ռիսկ չկա: Ուղղակի կան մի քանի կառուցապատողներ, որոնք ունեն 100% հասանելիություն, եւ, պատկերացրե՛ք, օրինակ, դուք հիպոտեկով բնակարան եք ձեռք բերել, կառուցապատողը 100% հասանելիություն է ստացել ձեր գումարին եւ հետո սնանկացել. ո՞վ է բնակարանը ձեզ տալու: Ես առաջարկում եմ այնպիսի մեխանիզմ, որ դուք ցանկացած պարագայում ունենաք բնակարան, ընդ որում՝ իմ առաջարկի հիման վրա ես կարող եմ նաեւ ասել, որ գները կիջնեն:

-Մինչ նախագիծն ԱԺ բերելը քննարկում անցկացրե՞լ եք կառուցապատողների հետ:

-Այո, անցկացրել եմ: Կառուցապատողներն են առաջարկել 55% սահմանաչափ դնել. ես առաջին տարբերակում 75% էի առաջարկել, հետո ընդառաջ եմ գնացել ու ավելի եմ իջեցրել՝ մինչեւ 50%, որ որեւէ խնդիր չլինի, ընդ որում՝ 2025 թվականից: Կառուցապատողներն ասում են, որ 23-25% հարկ են վճարում, մոտավոր 25% շահույթ են ստանում, տոկոսավճարներ են ստանում, որոշակի կապիտալ ունեն, ու այս հանրագումարը իրենց կարծիքով 50-55% է կազմում, եւ մենք հենց այս տարբերակով էլ առաջ ենք շարժվում, այսինքն՝ սա կառուցապատողների հետ հանդիպման արդյունքում ձեւավորված առաջարկ է: Այդ քննարկմանը մասնակցել է նաեւ Կառուցապատողների ասոցիացիան, որտեղ 70% կառուցապատողներ են, եւ, մոտավորապես, եւս 20 այդ պահին դժգոհ կառուցապատող, որոնց դժգոհություններին լուծում ենք տվել, որովհետեւ իրենք 75%-ի դեպքում էին խնդիր տեսնում:

-Պարոն Պապոյան, մեզ ահազանգած կառուցապատողները պնդում էին, որ նախագիծը նպատակ ունի մենաշնորհ ապահովել «Ռենշին» ընկերության համար, որը կառուցապատմամբ է զբաղվում:

-Ես չգիտեմ՝ ինչ է «Ռենշին» ընկերությունը, երբեւէ որեւէ կառուցապատողի չեմ հանդիպել՝ հանրային հանդիպումներից զատ: Այս նախագծի նպատակը ՀՀ-ում այս պահին 60000 ընտանիքի շահերի պաշտպանությունն է: Հենց այս պահին ունենք 3 կառուցապատող, որոնք արդեն իսկ խնդիրներ են ստեղծել: Դրանցից մեկը 120 երիտասարդ գիտնականներից գումարներ է վերցրել՝ 90-100% հասանելիությամբ, բայց շինարարությունը 3-4-րդ հարկերում դադարեցված է: Մեր խնդիրը սա է: Մենք ունենք կառուցապատող, ով մարդկանցից գումարներ է վերցրել Դավիթաշենում բնակարաններ կառուցելու համար, եւ շինարարությունը էլի կանգնած է: Երբ այս ծավալները հանկարծ մեծացան, դրա դեմը կանգնեցնել մենք այլեւս չենք կարողանա: Մենք ընդամենը առաջարկում ենք կառավարել ռիսկերը: Ես այժմ յուրաքանչյուր ընթերցողի հարցնում եմ՝ արդյոք իրենք պատրաստ են հենց այնպես ինչ-որ մեկին վճարել 20-30 մլն դրամ այն հույսով, որ այդ ինչ-որ մեկը 3 տարի հետո իրեն բնակարան է տալու: Ինձ թվում է, որ մարդկանցից շատերը ուղղակի տեղեկացված չեն, եւ մենք մեր քաղաքացիներին պետք է ուղղակի պաշտպանենք: Լոբբինգը ինձ մոտ չի աշխատում, ինձ մոտ լոբբինգ կարող են անել միայն ՀՀ հազարավոր քաղաքացիները: Ինձ հետ նման շանտաժի եղանակով խոսելը անիմաստ է, դրա փոխարեն առաջարկում եմ, որ այն կառուցապատողները, որոնք կիսատ են թողել շինարարությունը, գնան շարունակեն իրենց գործը, նրանք թող ուղղակի մոռանան, որ հնարավոր է ՀՀ քաղաքացուն «գցել»:

Ես, իհարկե, հասկանում եմ մի քան հարուստ, շատ հարուստ տնտեսվարողների, կառուցապատողների, խոշոր կապիտալ ունեցող մարդկանց, որոնք կարող են գնել ամեն ինչ: Այդ մարդկանց նախագծով ստիպում եմ ոչ միայն իրենց մասին մտածել, այլ նաեւ հազարավոր մարդկանց, ուստի պատրաստ եմ որոշակի հարվածների. դրանք կարող են լինել հոդվածների, արշավների տեսքով, բայց ես վստահ եմ, որ սա հազարավոր մարդկանց համար է, պետության, շուկայի համար է, հետեւաբար չեմ պարաստվում ընկրկել որեւէ հարցի առաջ: Ուստի ի սկզբանե պատրաստ եմ եղել հարվածներն ընդունել, այդ խմբակներին էլ խորհուրդ եմ տալիս ոչ թե հոդվածներ պատվիրել կամ մարդկանց ուղղորդել իմ նախագծի դեմ, այլ մտնել մասնագիտական քննարկման դաշտ: Նշեմ նաեւ, որ նախագծին դրական եզրակացություն է տվել կառավարությունը, Կենտրոնական բանկը:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՆԱԽԿԻՆ ՊԵՏԻ ՀԵՏԵՎԻՑ ԵՆ ԸՆԿԵԼ

Իրավապահ համակարգը ընկել է ՀՀ ՊՆ կենտրոնական զինվորական կլինիկական հոսպիտալի կամ բոլորին հայտնի Մուրացանի հոսպիտալի նախկին պետ Արամ Ասատուրյանի, ինչպես նաեւ Սիսիանի զինվորական հոսպիտալի ներկայիս պետ Դանիել Մկրտչյանի հետեւից: Վերջիններիս մեղադրանք է առաջադրվել դիզվառելիք յուրացնելու եւ պետությանը շուրջ 25 միլիոն դրամի վնաս հասցնելու համար: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ անգամ ծառայության պետ Վահան Օսեյանի տան լոգարանի պետքարանի եւ հավաքնի վրա նախաքննական մարմինը արգելանք է դրել:

Մուրացանի հոսպիտալի նախկին պետ Արամ Ասատուրյանի փաստաբան Վարդուհի Էլբակյանը «Ժողովուրդ» օրաթերթին հայտնեց, որ սա աբսուրդ քրեական գործ է, որն արդեն գտնվում է Հակակոռուպցիոն դատարանում: «Նախ՝ նշեմ՝ մոտ 20 միլիոն դրամի յուրացման մասին է խոսքը, եւ ինքներդ կարող եք գալ դատարան արդեն ու տեսնել, թե ինչպես են մարդկային կյանքեր փրկած անձանց դիզվառելիքի հափշտակման մեջ մեղադրում»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց փաստաբանը:

ԱԶԱՏԵՑ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ Գոհար Դարբինյանը 2023 թվականի հունիսի 16-ից կազատվի Առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնից.

«Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով եւ «Տեսչական մարմինների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Գոհար Դարբինյանին 2023 թվականի հունիսի 16-ից ազատել Առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնից»:

«Ժողովուրդ» օրաթերթի՝ Կառավարությանը մոտ կանգնած հավաստի աղբյուրները փոխանցում են, որ Գոհար Դարբինյանը տեսչության նախկին պետ Հակոբ Ավագյանի բարեկամուհին էր, ու վերջինս, կարելի է ասել, տեսչությունում մատնված էր անգործության: Հակոբ Ավագյանի հովանավորության ներքո Դարբինյանն ամեն կերպ փորձել է իր պաշտոնը պահել՝ իշխանությունների մոտ ծանոթ գտնելով, սակայն նրան դա չի հաջողվել: Առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի պարտականությունները կատարող Սլավիկ Սարգսյանը չի հանդուրժել Գոհար Դարբինյանի անգործությունը, ինչի համար էլ վերջինս ազատման դիմում է ներկայացրել:

«Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները փոխանցում են, որ առաջիկայում պետք է նաեւ որոշվի տեսչության ղեկավարի նշանակման հարցը, ու չի բացառվում, որ Սլավիկ Սարգսյանը նշանակվի այդ պաշտոնին:

ԽԱՆԴԻ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ՝ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ազգային ժողովի ՔՊ խմբակցության պատգամավոր Արսեն Թորոսյանը շարունակում է իրեն որպես ընդդիմադիր դրսեւորել: Նա վերջին շրջանում հաճախ է «խանդի տեսարաններ սարքում»՝ հատկապես առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի հետ կապված. հավանաբար Թորոսյանը դեռ չի հարմարվում այն փաստի հետ, որ Ավանեսյանը գործադիրում զբաղեցնում է իր տեղը, իսկ ինքն օրենսդիրում պատգամավոր է:

Արսեն Թորոսյանը գրեթե մշտապես փորձում է Ավանեսյանի գործունեության մեջ սխալներ, թերություններ գտնել, շտկել դրանք, դժգոհություններ է հայտնում նրա որոշումների մասով: Նա չի համակերպվում, որ Ավանեսյանն իրենից անկախ է գործում, իր թելադրանքները չի կատարում, իրեն չի ենթարկվում:

Թորոսյանը հերթական անգամ խանդի դրսեւորում է ցուցաբերել երեկ իր ֆեյսբուքյան էջում՝ Անահիտ Ավանեսյանի որոշման հետ կապված:

Անահիտ Ավանեսյանը 2022թ.-ի հոկտեմբերի 20-ին որոշում էր ստորագրել՝ հաստատելով տրանսպորտային միջոցների դեղարկղերում պարունակվող պարտադիր դեղերի եւ բժշկական պարագաների ցանկը: Համաձայն հավելվածի այդ դեղերն են՝

1. Մանրէազերծված բինտ
2. չմանրէազերծված բինտ
3. էլաստիկ բինտ
4. մկրատ
5. բամբակ (խոնավածուծ, հիգրոսկոպիկ)
6. յոդ կամ պովիդոն յոդի 10%-անոց լուծույթ
7. մենթոլի լուծույթ մենթիլ իզովալերաթթվում (վալիդոլ)
8. կորվալոլ
9. նիտրոգլիցերին
10. անուշադրի սպիրտ
11. արյունահոսությունը դադարեցնող ձգալարան
12. կպչուն սպեղանի
13. ցավազրկող դեղեր:

Եւ, ահա, Արսեն Թորոսյանը հերթական բացթողումն է գտել Անահիտ Ավանեսյանի այս որոշման մեջ:

Թորոսյանը գտնում է, որ Ավանեսյանի որոշմամբ հաստատված դեղերի ցանկում կան դեղեր, որոնք ունեն պահպանման հատուկ պայմաններ, ինչը մեքենայի մեջ հնարավոր չի լինի ապահովել, ուստի դեղերը շուտ կփչանան:

Թորոսյանը կարծում է նաեւ, որ վարորդները դժվար թե իմանան այնտեղ նշված դեղերի օգտագործման ճիշտ ցուցումները:

Բացի սա, Թորոսյանը նշել է, որ մեքենաների դեղարկղներում պարտադիր պարունակող ցանկը պետք է ներառի միայն բժշկական պարագաներ՝ առաջին բուժօգնության համար, եւ ոչ թե դեղորայք:

Դիմելով Ավանեսյանին՝ Թորոսյանը հորդորել է նախարարին վերանայել այդ որոշումը:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՎԵՐԱԴԱՐՁ

ԱՐՑԱԽԻ ՄԻՊ-Ը ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ Է

Արդեն մի քանի օր ռուս խաղաղապահների ուղեկցությամբ Ստեփանակերտից սահմանափակ քանակով մարդիկ են տեղափոխվել Հայաստան եւ նույնչափ էլ Հայաստանից են վերադարձել Արցախ: Այս մասին հունիսի 6-ին Alpha News-ի եթերում ասել է Արցախի մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանը եւ հավելել, որ Արցախից շուրջ 100 մարդ է տեղափոխվել Հայաստան, շուրջ 110-ն էլ վերադարձել է Արցախ:

ՄԻՊ-ը պարզաբանել է, որ ամբողջ ընթացքում, այդ թվում՝ Հակարիի կամրջի անցակետում հայ քաղաքացիներին ուղեկցել են ռուս խաղաղապահները, չնայած որ ադրբեջանական տեսանյութերում խաղաղապահները չեն երեւում:

«Կարծում եմ, որ ադրբեջանական կողմը հատուկ է անում, որ տեսանյութերում ռուս խաղաղապահները չերեւան. սա քարոզչական նպատակ է հետապնդում՝ ցույց տալու, որ, տեսեք, առանց երրորդ կողմի Ղարաբաղի հայ բնակչությունը անցնում է Հակարիի անցակետով:

Քաղաքացիներից մեկի խոսքով՝ ադրբեջանցի սահմանապահը փորձել է համոզել իրենց, որ առանց ռուս խաղաղապահների մեքենաների կարող են գալ, այսինքն՝ կարող են իրենց մեքենաներով հանգիստ տեղաշարժվել: Հստակ է, որ ադրբեջանցիների նպատակն է այնպես անել, որ այս պրոցեսին չլինի ռուսական կողմի մասնակցությունը կամ էլ Կարմիր խաչինը, ու նրանք կարողանան արտաքին աշխարհին ցույց տալ, որ խնդիր չկա, եւ այսպես կոչված «ինտեգրացիան» գործի մեջ է»,- ասել է Արցախի ՄԻՊ-ը ու հավելել, որ ադրբեջանական կողմը, տարածելով այդ տեսանյութերը, նպատակ է հետապնդում միջազգային հանրությանը ցույց տալ, որ անցակետն աշխատում է բնականոն հունով, եւ միջանցքով մարդկանց ազատ տեղաշարժն ապահովված է:

«Ընդ որում՝ նկարահանումն իրականացվում է առանց մարդկանց թույլտվության՝ խախտելով մարդկանց իրավունքը»,- նշել է Գեղամ Ստեփանյանը:

Արցախցի պաշտոնյան հիշեցրել է, որ Հակարիի կամրջի մոտ անցակետ դնելուց հետո ադրբեջանական կողմը խոչընդոտում էր Կարմիր խաչին արցախցի բուժառուներին տեղափոխել Հայաստան: Երկար բանակցություններից հետո, ըստ Գեղամ Ստեփանյանի, արդեն մի քանի անգամ Կարմիր խաչի միջնորդությամբ եւ ուղեկցությամբ բուժառուներ են տեղափոխվել Հայաստան:

«Ադրբեջանը դիտավորյալ էր խոչընդոտում բուժառուների տեղափոխումը. դա հատուկ էր արվում, որպեսզի Արցախի քաղաքացիները սկսեն օգտվել այսպես կոչված «անցակետից»: Վստահ եմ, որ ոչ միայն բուժառուները, այլեւ Կարմիր խաչի ներկայացուցիչները, որոնք անարգել ելումուտ պետք է ունենան Արցախ, այսօր անձնագրային ստուգում են անցնում:

Մտահոգիչն այն է, որ մարդիկ, որոնք գտնվում են Ադրբեջանի թիրախում եւ հայտարարված թշնամի են Ադրբեջանի համար, նրանց անձնագրային տվյալները հայտնվում են Ադրբեջանի տրամադրության տակ, ինչը խորացնում է անվտանգային սպառնալիքները արցախցիների նկատմամբ»,- ասել է Գեղամ Ստեփանյանը:

Օրինակ՝ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարությունում կան մարդիկ, որոնք անցնում են ադրբեջանական քրեական գործերով, հետեւաբար, ըստ ՄԻՊ-ի, այդ մարդիկ չեն կարող օգտվել այդ անցակետով, քանի որ Ադրբեջանը առիթը բաց չի թողնի եւ կարող է առեւանգել նրանց:

Գեղամ Ստեփանյանը կարծում է, որ որեւէ կերպ չպետք է թույլ տալ, որ առանց երրորդ կողմի հայ քաղաքացիները կարողանան տեղափոխվել այս կամ այն բնակավայր, քանի որ դա ադրբեջանական կողմին հիմք կտա՝պնդելու, որ ազատ տեղաշարժը վերականգնվել է:

«Քանի դեռ մարդիկ այդ ճանապարհով անցնում են երրորդ կողմի ուղեկցությամբ, ուրեմն առկա են եւ հոգեբանական, եւ ֆիզիկական սպառնալիքներ: Այդ իրավիճակում խոսել միջանցքի բաց լինելու կամ շրջափակման վերացման մասին տրամաբանական չէ»,- ընդգծել է Արցախի ՄԻՊ-ը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԲՈՒՆՏ՝ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Գեւորգ Պապոյանի հեղինակած նախագիծը իսկական բունտ է առաջացրել կառուցապատողների շրջանում:

Պատգամավորն առաջարկում է հետեւյալը. բանկը, որից քաղաքացին առաջնային շուկայից հիպոթեքային վարկով բնակարան է գնում, վարկն ամբողջությամբ չտրամադրի կառուցապատողին, դրա 25 տոկոսը փոխանցի, մնացած 75-ը վճարի, երբ բնակարանը կառուցվի եւ հանձնվի սեփականատիրոջը:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծն առաջին ընթերցմամբ արդեն իսկ ընդունվել է ԱԺ-ում:

«Ժողովուրդ» օրաթերթը վերջին օրերին դժգոհություններ է ստանում կառուցապատմամբ զբաղվող ընկերություններից, որ պատգամավորի այս նախագիծը մեծ վնաս է հասցնելու կառուցապատման ոլորտին: Կառուցապատողները նշում են, որ եթե գումար չստանան, չեն կարողանա աշխատանքը կատարել: Նրանք մտադիր են մինչեւ անգամ բողոքի ակցիա կազմակերպել՝ ընդդեմ պատգամավորի հեղինակած նախագծի:

Մեր տեղեկություններով՝ ՔՊ ներսում եւս տարաձայնություններ կան՝ նախագծի հետ կապված, պատգամավորները եւս առաջարկել են Պապոյանին հետ կանգնել իր մտադրությունից, բայց վերջինս չի ցանկանում հետքայլ անել:

Բանը հասել է մինչեւ անգամ Նիկոլ Փաշինյանին: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Փաշինյանն ու Գեւորգ Պապոյանը կառավարությունում հանդիպելու են կառուցապատողների հետ:

Առաջիկայում թեմայի վերաբերյալ կներկայացնենք նաեւ Գեւորգ Պապոյանի պարզաբանումը:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը որոշում է ստորագրել Վահագն Հարությունյանին ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ նշանակելու մասին:

«Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով եւ «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Վահագն Հարությունյանին 2023 թվականի հունիսի 12-ից նշանակել սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ»,- նշված է որոշման մեջ:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՄԵՂԱԴՐՅԱԼ՝ ՔՊ-ԱԿԱՆԻ ԵՂԲՈՐ ԳՈՐԾՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ երեկ Երեւանի Բաղրամյան պողոտայում սպանված Վարազդատ Գասպարյանը որոշեց մեղադրյալ ներգրավված է եղել «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Խաչատուր Սուքիասյանի եղբոր՝ Ռոբերտ Սուքիասյանի քրեական գործով: Իսկ հիմա ամեն ինչի մասին ամենասկզբից:

Երեկ shamshyan.com-ը գրել էր, որ հրազենի գործադրմամբ սպանություն է տեղի ունեցել Երեւանում՝ Բաղրամյան պողոտայից դեպի Ջեյմս Բրայսի փողոց տանող հատվածում՝ թիվ 8-րդ պոլիկլինիկայի հարեւանությամբ: Սպանվածը Երեւան քաղաքի Վարդանանց փողոցի բնակիչ, 35-ամյա Վարազդատ Գասպարյանն է, որը հայտնի է Գնունեցի Վարազիկ անունով:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ մինչ սպանությունը Վարազդատ Գասպարյանն անցել է եւս մեկ քրեական գործով. 2021 թվականի հուլիսի 18-ին կրակոցներ էին հնչել Ամիրյան փողոցի՝ դեպի Սարյան տանող հատվածում՝ ԱԱԾ Երեւանի վարչության դիմաց. կրակել էին սեւ Mazda 6 մակնիշի ավտոմեքենայից:

Ոստիկաններն ու քննիչները պարզել են, որ նույն օրը՝ժամը 19:00-ի սահմաններում, նշված վայրում կենցաղային հարցերի շուրջ վիճաբանություն է տեղի ունեցել Երեւան քաղաքի բնակիչներ 51-ամյա Ռոբերտ Սուքիասյանի, 47-ամյա Արման Ապիյանի, 33-ամյա Վարազդատ Գասպարյանի, 29-ամյա Սարգիս Աբգարյանի եւ մյուս կողմի՝ Երեւանի բնակիչ 35-ամյա Նարեկ Կարապետյանի եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացի, 42-ամյա Հարութ Հաբգարյանի միջեւ:

Ըստ ձեռք բերված տեղեկությունների՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր, գործարար Խաչատուր Սուքիասյանի եղբայրը՝ Ռոբերտ Սուքիասյանը, իր մոտ եղած հրազենից կրակոցներ էր արձակել, ինչի հետեւանքով Հ. Հաբգարյանը ոտքի շրջանում ստացել է հրազենային վնասվածք:

Այս գործով մեղադրյալի աթոռին էր հայտնվել Ռոբերտ Սուքիասյանը, որին մեղադրանք է առաջադրվել զենքի գործադրմամբ հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսեւորելու, խուլիգանական մղումներով, հասարակության եւ բարոյականության նորմերի նկատմամբ անթաքույց արհամարանքի հողի վրա, հասարակական վայրում ուղղակի դիտավորությամբ խուլիգանություն կատարելու համար:

Մեղադրյալի աթոռին էր հայտնվել նաեւ Վարազդատ Գասպարյանը, որին երեկ սպանեցին Երեւանի կենտրոնում. նրան էլ մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2021 թվականի հուլիսի 18-ին, հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսեւորելով, խուլիգանական մղումներով, հասարակության եւ բարոյականության նորմերի նկատմամբ անթաքույց արհամարանքի հողի վրա, հասարակական վայրում ուղղակի դիտավորությամբ կատարել է խուլիգանություն: Այս գործը դեռես դատարանում է քննվում, եւ, ահա, երկու տարի անց մեղադրյալներից մեկին սպանում են, այն էլ՝ կրակելով աչքին:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎԱՐՈՒՅԹ

ԿԱՆԽՎԵԼ Է ԹՄՐԱՄԻՋՈՑԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ

Օրերս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչության «Զվարթնոց» բաժնի աշխատակիցները, իրացնելով ստացված օպերատիվ տեղեկատվությունը, «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲ ընկերության «Զվարթնոց» օդանավակայանի «Կարգո» բեռնային համալիրի մաքսային հսկողության գոտում Հայաստանի Հանրապետությունից Ավստրալիա առաքվող միջազգային սուրհանդակային առաքանին ենթարկել են մաքսային հսկողության:

Առաքանու զննման արդյունքում, ի թիվս այլ ապրանքների, հայտնաբերվել է Մեթամֆետամին տեսակի թմրամիջոցի զանգվածով լցված կազմերով պատրաստված 2 գիրք, որոնց ընդհանուր քաշը կազմել է 1,5 կգ:

Նշված զանգվածի հայտնաբերման փաստով, ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության օպերատիվ հետախուզության բաժնի աշխատակիցների կողմից ձեռնարկված անհետաձգելի օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակում, տեղեկություններ էին ստացվել, որ հիշյալ առաքանու ուղարկող է հանդիսանում ԻԻՀ քաղաքացի Է.Բ-ն:

Քաղաքացին հայտնաբերվել եւ ձերբակալվել է, որից հետո տեղափոխվել է ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչություն:

Փաստի առթիվ կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչության աշխատակիցների կողմից կազմված մաքսանենգության դեպքի վերաբերյալ արձանագրությունը, անձնական խուզարկության արդյունքում հայտնաբերված առարկաները, հայտնաբերված թմրամիջոցի զանգվածների հետ միասին տրամադրվել են Քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչություն, որտեղ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 399-րդ հոդվածի հատկանիշներով:

ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումները շարունակվում են՝ վերոնշյալ թմրամիջոցի ապօրինի շրջանառության մեջ ներգրավված հնարավոր անձանց շրջանակը պարզելու ուղղությամբ:

Ծանուցում. հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ԴԱՏԱՐԱՆՈՒՄ Է

ՍԻՐԱՅԻՆ ԿԱՊԻ ՀԵՏԵՎԱՆՔԸ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Անդրանիկ Աշոտի Կարապետյանը մեղադրվում է այն հանցավոր արարքի կատարման համար, որ 2023թ.-ի հունվարի 15-ին՝ժամը 19:00-ի սահմաններում, Արմավիրի մարզի Գայ գյուղի վարչական տարածքում գործող «Մեյմանդար» կոչվող գյուղմթերի շուկայի վերջնամասում գործող մանրածախ առեւտրի համար նախատեսված սրահում խանդի շարժառիթով, ապօրինաբար մեկ ուրիշին կյանքից զրկելու դիտավորությամբ իր մոտ պահած կենցաղային օգտագործման համար նախատեսված դանակով մեկ անգամ հարվածել է Սարգիս Ատիկյանի պարանոցին, ինչի հետեւանքով վերջինս տեղում մահացել է, ինչպես նաեւ մեկ ուրիշի առողջությանը վնաս պատճառելու դիտավորությամբ նույն դանակով հարվածներ է հասցրել օգնության հասած Արթուր Հարությունյանի մարմնի տարբեր մասերին:

Այսպես, Անդրանիկ Աշոտի Կարապետյանը, դեռեւս 2021 թվականի օգոստոս ամսից կասկածներ ունենալով իր կնոջ՝Ալվարդ Դիլանյանի եւ իրենց հետ գյուղմթերքի առեւտուր կատարած Սարգիս Ատիկյանի միջեւ եղած սիրային կապի վերաբերյալ, խանդի շարժառիթով 2023թ-ի հունվարի 15-ին՝ ժամը 19:00-ի սահմաններում, Արմավիրի մարզի Գայ գյուղի վարչական տարածքում գործող «Մեյմանդար» կոչվող գյուղմթերքի շուկայի վերջնամասում գործող մանրածախ առեւտրի համար նախատեսված սրահում հանդիպելով Սարգիս Ատիկյանին, մոտեցել եւ իր մոտ պահած կենցաղային օգտագործման համար նախատեսված դանակով մեկ անգամ հարվածել է վերջինիս պարանոցի ձախ կեսի վերին երրորդականի առաջային մակերեսին, ինչի հետեւանքով վերջինս տեղում մահացել է:

Այնուհետեւ նույն դանակով հարվածներ է հասցրել օգնության հասած Ա.Հարությունյանի քրոջ որդու՝ Արթուր Հարությունյանի մարմնի տարբեր մասերին՝ վերջինիս պատճառելով միջին ծանրության վնաս՝ «ձախ նախաբազկի վերին երրորդի ներսային մակերեսի կտրած-ծակած վերք՝ մկանների եւ անոթների վնասումով, աջ դաստակի ափային մակերեսի կտրած վերք» մարմնական վնասվածքներ, որից հետո հեռացել է նշված վայրից:

Այսինքն՝ Անդրանիկ Աշոտի Կարապետյանը կատարել է արարք, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով եւ 167-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով:

Գործը մտավ դատարան:

Ք.Մ.

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 6-ից 7-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 63 դեպք, որոնցից 2-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԵՐԿՈՒՄԻ ՓՈԽԱՐԵՆ՝ ՄԵԿ ԴՊՐՈՑ

Դիլիջան համայնքի Գոշ գյուղում գործում է հանրակրթական երկու դպրոց՝ հիմնական եւ միջնակարգ: Մոտ 1100 բնակիչ ունեցող գյուղում երկու դպրոց է պահվում, պետական բյուջեից մեծ ծախսեր են կատարվում: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ ուղարկել՝ հարցնելով, թե Գոշում գործող հիմնական եւ միջնակարգ դպրոցներից յուրաքանչյուրը քանի աշակերտ ունի, ինչքան են կազմում պետական բյուջեից այդ դպրոցների ֆինանսավորման ծախսերը, այդ ծախսերը կրճատելու համար Գոշ գյուղում ինչու մեկ դպրոց չի գործում: Տավուշի մարզպետարանից ստացված գրավոր պատասխանը ներկայացնում եմ առանց կետադրական ուղղումների. «Գոշի միջնակարգ դպրոցն ունի 109 աշակերտ, հիմնական դպրոցը 39 աշակերտ: Կառավարության 300 դպրոց եւ 500 մանկապարտեզ ծրագրով Գոշ գյուղում կառուցվելու է մեկ մոդուլային դպրոց: Աշխատանքները գտնվում են նախագծային փուլում: Գոշի հիմնական դպրոցի 2022 թվականի պահպանման ծախսերի ֆինանսավորումը կազմել է 26611,6 հազար դրամ, իսկ Գոշի միջնակարգ դպրոցինը՝ 50226,8 հազար դրամ»:

Ո՞Վ ԿՆՈՐՈԳԻ ԲՈՒԺԿԵՏԸ

Արդեն երեք տարի է, ինչ Նոյեմբերյան խոշորացված համայնքի սահմանամերձ, հեռավոր Բարեկամավան գյուղի բուժկետի տանիքի կեսը բաց է, ձյունը, անձրեւները լցվում են առողջապահական հիմարկ, ստեղծում հակասանիտարական վիճակ, բուժկետի պատերը բորբոսով պատել են: Բուժկետի տանիքի կեսը քանդվել է ուժգին քամուց: Երեք տարի առաջ Ռուսաստանի Ստավրոպոլ քաղաքում ապրող բարեկամավանցիները գումարներ են հավաքել Բարեկավանի միջնակարգ դպրոցի տանիքը վերանորոգելու համար, սակայն այն ժամանակ Տավուշի մարզպետ Հայկ Չոբանյանը դպրոցի տանիքը նորոգելու համար պահանջվող գումարի չափը քիչ է նշել, այդ պատճառով ստավրոպոլցի բարեկամավանցիների հանգանակած գումարը չի հերիքել, հանրակրթական դպրոցի տանիքի նորոգումը կիսատ է մնացել, անձրեւները լցվում են դպրոցի շենք: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ ուղարկել՝ հարցնելով, թե երբ կիրականացվի Բարեկամավանի միջնակարգ դպրոցի եւ գյուղի բուժկետի տանիքների վերանորոգումը: Տավուշի մարզպետարանի պատասխանը ներկայացնում եմ առանց կետադրական եւ այլ փոփոխություններ անելու. «Բարեկամավանի բուժկետի տանիքը կվերանորոգվի 2023 թվականին Կարմիր խաչի կողմից: Բարեկամավանի դպրոցի տանիքը կընդգրկվի 2023 թվականի հրատապ ծրագրերում»: Տավուշի մարզպետարանի թվով 76 աշխատակից 2022 թվականի պետական բյուջեից 59,5 միլիոն դրամ պարգեւատրում է ստացել: Տավուշի մարզպետարանի աշխատողների պարգեւատրումների, դրամական խրախուսումների եւ հատուկ վճարների համար 2023 թվականին նախատեսված է 48 միլիոն 121 հազար 800 դրամ, քաղաքացիական, դատական եւ պետական այլ ծառայողների պարգեւատրումների, դրամական խրախուսումների եւ հատուկ վճարների համար՝24 միլիոն 47 հազար 400 դրամ: Պետական բյուջեի մեծ գումարները ծախսվում են Տավուշի մարզպետարանի պաշտոնյաներին պարգեւատրելու համար, իսկ պետական հիմարկ բուժկետի շենքի տանիքը նախատեսված է իրականացնել Կարմիր խաչի միջոցներով:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԸ ՄԵԿՆԱՐԿԵՑ

Հունիսի 6-ին լրացավ մեծանուն կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակը: Մամուլի ասուլիսով ազդարարվեց Խաչատրյանի անվան 19-րդ միջազգային մրցույթի մեկնարկը:



Ասուլիսի բանախոսներն էին ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արա Խզմալյանը, «Արամ Խաչատրյան» մշակութային հիմնադրամի գործադիր տնօրեն Մարտին Թովմասյանը, Խաչատրյանի անվան միջազգային մրցույթի գեղարվեստական ղեկավար Սերգեյ Սմբատյանը, Խաչատրյանի անվան 19-րդ մրցույթի ժյուրիի նախագահ Սերգեյ Սարաջյանը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արա Խզմալյանը ողջունեց փառատոնի մասնակիցներին, հյուրերին, կազմակերպիչներին եւ նշեց, որ խաչատրյանական տարին մեկնարկում է մեծ միջոցառումներով եւ հագեցած կլինի աշխարհագրական լայն ընդգրկում ունեցող ծրագրերով. «Այս հոբելյանն առիթ է իրականում վերահմաստավորելու Արամ Խաչատրյանի երաժշտական ժառանգությունը, մշտական, ամենօրյա աշխատանքի միջոցով միջազգային ասպարեզում ներկայացնելու մեծանուն կոմպոզիտորի ստեղծագործական ժառանգությունը: Արամ Խաչատրյանն այն անունն է, որի արվեստը շտկում է մեր մեջքը, եւ որի երաժշտության մեջ հայի գաղափարն ու Հայաստանը շատ ավելի մեծ են, քան Հայաստանի աշխարհագրական սահմաններն են: Արամ Խաչատրյանն այն անունն է, որով մենք լիակատար առումով դառնում ենք մեծ մշակութային ընտանիքի, մեծ քաղաքակրթությունների լիիրավ անդամ»:

Նախարարի տեղակալի նշմամբ՝ հոբելյանական տարվա ընթացքում շատ հագեցած ծրագրեր կիրականացվեն նաեւ մարզերում. պետական ստեղծագործական կոլեկտիվները բազմաթիվ միջոցառումներով հանդես կգան սահմանամերձ շրջաններում: Նախարարի տեղակալը շնորհավորել է Պետական սիմֆոնիկ նվագախմբի ղեկավարին եւ կոլեկտիվին Միացյալ Թագավորության հեղինակավոր հարթակներում խաչատրյանական ստեղծագործությունների փայլուն ներկայացման համար, որին ներկա են եղել ոչ միայն հայ, այլեւ օտարազգի երաժշտասերները:

Արա Խզմալյանը տեղեկացմամբ՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ եւ «Արամ Խաչատրյան» մշակութային հիմնադրամի նախաձեռնությամբ ֆրանսիական հեղինակավոր «Mezzo» հեռուստաալիքը փաստագրական ֆիլմ է նկարահանել հայ մեծ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի մասին: Սերգեյ Սմբատյանը տեղեկացրեց, որ մրցույթի բացման համերգի ընթացքում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ ելույթ կունենա բրիտանացի վիրտուոզ ջութակահարուհի Ջենիֆեր Փայքը: Անվանի ջութակահարը նվագախմբի հետ ելույթներ է ունեցել հունվարին Միացյալ Թագավորությունում կայացած հյուրախաղերի ընթացքում՝ ներկայացնելով Խաչատրյանի Ջութակի կոնցերտը:

«Մրցույթը՝որպես երիտասարդ տաղանդներին բացահայտելու հարթակ, մեծ դեր ունի: Եվ այսօր շատ տաղանդավոր երաժիշտներ, որոնք հանդես են գալիս աշխարհի տարբեր բեմերում լավագույն նվագախմբերի ու դիրիժորների հետ, հաղթել են Խաչատրյանի անվան մրցույթում: Մենք ունենք բազմաթիվ նման օրինակներ, ինչը խոսում է մրցույթի՝միջազգային չափանիշներին համապատասխանելու մասին»,- նշել է Սերգեյ Սմբատյանը:

«Արամ Խաչատրյան» մշակութային հիմնադրամի տնօրեն Մարտին Թովմասյանը, ներկայացնելով մրցույթի ընթացքը, նշել է, որ այն բաղկացած է 3 փուլից, որոնք տեղի կունենան Կոմիտասի թանգարան-ինստիտուտում եւ Արամ Խաչատրյան համերգասրահում: Նա նաեւ տեղեկացրել է, որ մրցույթի դափնեկիրների անունները կհրապարակվեն հունիսի 13-ին՝ փակման գալա համերգի ընթացքում: Ժյուրիի նախագահ, անվանի դաշնակահար Սերգեյ Սարաջյանն էլ ընդգծել է, որ Խաչատրյանի անվան միջազգային մրցույթն իրեն շատ հոգեհարազատ է, քանի որ կանգնած է եղել մրցույթի ստեղծման ակունքներում: Ըստ նրա՝ Խաչատրյանի անվան միջազգային մրցույթը տարեցտարի թափ է հավաքում եւ մեծ դեր է կատարում Հայաստանի երաժշտական կյանքում: Նա նաեւ ներկայացրել է ժյուրիի կազմը՝ շեշտելով, որ ընդգրկված են տարբեր երկրների ներկայացուցիչներ՝ Վահագն Պապյան (Իսրայել-Հայաստան), Պավել Գիլիլով (Ավստրիա-Գերմանիա), Ստեֆան Լեմելին (Կանադա), Օքսանա Յաբլոնսկայա (ԱՄՆ), Սիանդոն Կոն (Չինաստան): Ժյուրիի նախագահը նաեւ նշել է՝ լսել է մրցույթի մասնակիցների կատարումները եւ հաշվի առնելով կատարողական բարձր վարպետությունը՝ համոզվել՝ հետաքրքիր ու մրցակցային մրցույթ է սպասվում: Նշենք, որ մրցույթի շրջանակում Հայաստան են ժամանել բազմաթիվ երիտասարդ դաշնակահարներ տարբեր երկրներից, որոնք մրցույթի ընթացքում պայքարելու են խաչատրյանական միջազգային մրցույթի դափնեկրի կոչման համար: Մրցույթի նախընտրական փուլը հաղթահարել են 22 դաշնակահարներ 7 երկրից (Հայաստան, Ֆրանսիա, Գերմանիա, Ճապոնիա, Չինաստան, Հարավային Կորեա, Ռուսաստանի Դաշնություն):

Խաչատրյանի անվան մրցույթը կցուցադրվի ֆրանսիական հեղինակավոր «Mezzo» հեռուստաալիքով: Մրցույթի հաղթողների կատարումները ցուցադրվելու են այդ ալիքի եթերում: Ցուցադրվելու են նաեւ չինական «Musiã Today» հարթակում, առցանց հեռարձակվելու են Խաչատրյանի մրցույթի պաշտոնական կայքէջով:

Խաչատրյանի անվան միջազգային մրցույթը հեղինակավոր ստուգատես է, որն իր կարեւոր տեղն ունի աշխարհում անցկացվող միջազգային մրցույթների ընտրանիքում: Մրցույթի նպատակն է բացահայտել երիտասարդ տաղանդավոր երաժիշտների եւ աշխարհում հանրայնացնել Արամ Խաչատրյանի արվեստը: Մրցույթն անցկացվում է երեք փուլով: Երկրորդ եւ երրորդ փուլերում պարտադիր կատարման ծրագրում ներառված են նաեւ Արամ Խաչատրյանի ստեղծագործությունները: Մրցույթի պաշտոնական նվագախումբն է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը: Երրորդ՝ եզրափակիչ փուլ անցած դաշնակահարները հանդես կգան Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի նվագակցությամբ: Խաչատրյանական մրցույթն անցկացվում է «Արամ Խաչատրյան» մշակութային հիմնադրամի կազմակերպմամբ եւ ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ: Մրցույթը 2013 թվականից Ժնեւում հիմնված Միջազգային երաժշտական մրցույթների համաշխարհային ֆեդերացիայի (WFIMC) անդամ է եւ գործում է ֆեդերացիայի սահմանած կանոններով:

ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

ՌՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՀՐԴԵՀՎԱԾ ԿԱՑԱՐԱՆՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղի զինվորական կացարանում այս տարվա հունվարին բռնկված հրդեհի հետեւանքով զոհված 15 զինծառայողների ծնողներն առաջիկա օրերին դեպքի վայրում կկատարեն որոշ ուսումնասիրություններ: Այս մասին տեղեկացրել է զոհված 15 զինծառայողներից 13-ի ծնողների լիազոր ներկայացուցիչ, փաստաբան Նորայր Նորիկյանը:

«ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայությունում Ազատ գյուղի զինվորական կացարանում զոհված 15 զինծառայողների ծնողները ինձ հետ միասին հանդիպել են Փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալ, գնդապետ Կամո Ցուցուլյանին: Հանդիպմանը մասնակցել են Փրկարար ծառայության բարձրաստիճան սպաներ, ինչպես նաեւ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի պետի տեղակալ, գնդապետ Արսեն Սարոյանը, որը դեպքի հաջորդ օրը՝ ս.թ. հունվարի 20-ին, Հանրային հեռուստաընկերության եթերով հեռարձակվող «Հանրային քննարկում» հաղորդման ժամանակ տառացիորեն հայտնել էր, որ զոհված 15 զինծառայողներից 14-ը ծխահարվել են, ներսում եղել է 21 հոգի, նրանցից 14-ը հայտնաբերվել են մահճակալներին պառկած: Զոհված զինծառայողների ծնողները բազմաթիվ հարցեր են բարձրացրել: Պայմանավորվածություն է ձեռք բերվել առաջիկա օրերին դեպքի վայրում կատարել որոշ ուսումնասիրություններ: Առաջիկա օրերի ընթացքում այս գործի վերաբերյալ հանդես կգամ առավել ծավալուն տեղեկատվությամբ...»,- սոցցանցի իր էջում գրում է փաստաբանը:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ՄՈԼՈՐՎԵԼ ԵՆ

Հունիսի 6-ին՝ ժամը 21:24-ին, Կոտայքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ երկու քաղաքացի մոլորվել են Բջնի գյուղի սարում: Այս մասին հայտնում են ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայությունից: Դեպքի վայր է մեկնել ՆԳՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատի օպերատիվ խումբը: Փրկարարները հայտնաբերել են մոլորված քաղաքացիներին (Հ. Մ.՝ ծնված 2003 թ., եւ Դ. Գ.՝ծնված 2003 թ.) եւ ուղեկցել Աղբյուրակի ջրամբարի մոտ:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 21 ճՏՊ. 37 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«ԲԻԷՍԹԻ» ՍՊԸ-ն (այսուհետ՝Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- Արագածոտնի մարզ, համայնք Աշտարակ ք.,Մուղնի 4-րդ թաղամաս, 152 հասցեում գտնվող 240,7 ք.մ. բնակելի տուն, 61,4 ք.մ. ավտոտնակ, 30,8 ք.մ. ամառային խոհանոց, 6,7 ք.մ. ս/հ, 12,5 ք.մ. պահեստ, 4,1 ք.մ. ծածկ, 17,1 ք.մ. /41,04 խ.մ./ պարիսպ եւ 0,0903 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 52900000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Քանաքեռ-Զեյթուն, Լեփսիուսի փողոց, 6 շենք, 16 հասցեում գտնվող 73,9 ք.մ. մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 34330000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 26.06.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 26.07.2023թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ՆՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնում ուսումնասիրվել են Հայաստանում եւ Արցախում տարածված Խինդողնի եւ Արենի սորտերի խաղողի կորիզներից լուծամզման մեթոդով ստացված բնական յուղերի օրգանոլեպտիկ, ֆիզիկաքիմիական հատկությունները եւ քիմիական բաղադրությունը: Որոշվել են նոպատակային արտադրանքի օպտիմալ ելքերը. տեղեկացնում է ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման եւ հասարակայնության հետ կապերի բաժինը:

Հետազոտական աշխատանքի գիտական ղեկավար, ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի Հալենային եւ նոր հալենային դեղապատրաստուկների լաբորատորիայի վարիչ, քիմիական գիտությունների դոկտոր Սլավիկ Դադայանն ասել է, որ խաղողի կորիզներից անջատված յուղը (grape seed oil) լայն համբավ ունի համաշխարհային սննդարդյունաբերության, դեղագործական արտադրության եւ գեղարարության (կոսմետոլոգիա) բնագավառներում:

«Այն պարունակում է մոնո- եւ պոլիչհագեցած ճարպաթթուներ, վիտամին E, կարոտինոիդներ եւ ֆենոլային միացություն-ներ, որոնք նպաստում են օրգանիզմի հակաօքսիդանտային, իմունապաշտպանիչ, հակաբորբոքային, վերքամոքիչ հատկությունների բարելավմանը: Այդ միացություն-ները չեն սինթեզվում մարդու օրգանիզմում, դրանք կարելի է ստանալ միայն սննդա-մթերքի հետ: Մեր հետազոտության նպատակն էր Արենի եւ Խինդողնի տեսակների մեջ եւ վերամշակման առաջնային արգասիքներում պարզել կենսաբանորեն եւ դեղաբա-նորեն ակտիվ բաղադրամասերի առկայությունը եւ դրանց անջատման համեմատաբար պարզ մեթոդների մշակման հնարավորությունը»,- ասել է նա:

Սննդի եւ դեղագործական արդյունաբերության համար Խինդողնի եւ Արենի տեսակի խաղողի կորիզներից լուծամզման եղանակով բարձրորակ եւ չռաֆինացված յուղի ստացման օպտիմալ պայմանների որոշման արդյունքում յուղի ելքը կազմել է 9.5%: Ցույց է տրվել, որ Խինդողնի եւ Արենի տեսակի խաղողի կորիզներից ստացվող յուղերը պարունակում են 1.118 մգ % տոկոֆերոլներ, 3.2 մգ % կարոտինոիդներ, C, P, E վիտամիններ, իսկ դրանց մշակման արգասիք քուսպերը պարունակում են արժեքավոր ազատ օրգանական թթուներ՝ թրթնջկաթթու (0.093 մգ/մլ), գինեթթու (3.105 մգ/մլ), կիտրոնաթթու (0.48 մգ/մլ): Ցույց է տրվել, որ Fe, Cu, Zn, Ca, Mg մակրոտարրերը եւ Mn, Co, Cd, V, Se, Cr, As, Pb միկրոտար-րերը հետազոտվող կորիզների նմուշներում առկա են թույլատրելի չափաքանակների սահմաններում: Պարզվել է, որ խաղողի հումքի օգտագործված երկու տեսակներն էլ պիտանի են կոմպլեքս եւ անթափոն մշակման արտադրության համար:

«Աշխատանքն ունի եւ՛ կիրառական, եւ՛ հիմնարար նշանակություն. այն նպատակաուղղված է ազգաբնակչության առողջ սննդակարգի բարելավմանը»,- ասել է Սլավիկ Դադայանը: Նա նաեւ նշել է, որ կատարված ուսումնասիրության վերջնարդյունքում իրականացվել է խաղողի հետազոտված հումքերի եւ դրանց առաջնային քուսպերի մշակման անթափոն արտադրության լաբորատոր տեխնոլոգիական սխեմա, որը կարող է հետաքրքրել շահագրգիռ կազմակերպություններին:

«Սեւ եւ սպիտակ խաղողի կորիզների յուղերի համեմատական հետազոտությունը՝ կախված կորիզների մանրեցման աստիճանից եւ գազային ածխաթթու գազի հոսքի արագությունից» թեմայով սույն հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտարտադրական կենտրոնի բազային ֆինանսավորման շրջանակներում:

Հետազոտության առաջին փուլի արդյունքների մասին անգլերենով հոդված է տպագրվել է ԵՊՀ-ի գիտական տեղեկագրում (Dadayan A. S., Stepanyan L.A., Sargsyan T.H., Poghosyan A.S., Minasyan E.V., Israelyan M. H., Hovhannisyan A.M., Dadayan S. A. // Study of oil and pomace from grape seeds for the identification of prereouistes of their complex processing / Proceedings of the Yerevan stateuniversity. Chemistry und biology, 2022, 56 (1), p. 18-30):

Հետազոտական աշխատանքում ներգրավված է եղել չորս երիտասարդ գիտաշխատող:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» Գ

ԱՌԱՋԱՏԱՐ՝ ՎԱՐԿԵՐԻ ՔԱՆԱԿՈՎ

2023 թվականի առաջին եռամսյակի արդյունքներով՝ գործող վարկերի քանակով «Յունիբանկ»-ը տուկայի առաջատարն է:

Սպառողական եւ բիզնես վարկավորումը միշտ եղել են «Յունիբանկ»-ի առաջնահերթ ուղղություններից: Բանկային ֆինանսավորման հասանելիությունը կարեւոր դեր ունի տնտեսության զարգացման տեմպերը պահելու, սպառման դինամիկայի եւ ՀՆԱ-ի աճի համար: Լայնամասշտաբ վարկավորումը մեծացնում է ապրանքների նկատմամբ պահանջարկը՝ խթանելով դրանց արտադրությունն ու վաճառքները եւ դրանով իսկ նպաստելով երկրի տնտեսական աճին:

Օգտվելով բանկի ծառայություններից՝ որպես ֆինանսական օգնականի՝ մարդիկ կարողանում են արագ լուծել կրթության, առողջության եւ այլ անհետաձգելի կարիքների համար անհրաժեշտ դրամական միջոցների խնդիրը, ինչպես նաեւ ձեռք բերել անհրաժեշտ ապրանքները: Վարկավորման գործընթացը հաճախորդների համար էլ ավելի հարմար դարձնելու նպատակով «Յունիբանկ»-ը զգալիորեն ընդլայնել է գործընկերային ցանցը: Ապառիկ գնումներ կարելի է կատարել բանկի գործընկեր ավելի քան 1300 խանութ-սրահներում հաշված րոպեների ընթացքում: Վարկի հաստատումն իրականացվում է արհեստական բանականության հիման վրա կառուցված համակարգով՝ բացառելով մարդկային գործոնը:

«Յունիբանկ»-ը բավականին ակտիվ աշխատում է նաեւ հիփոթեքային վարկավորման ուղղությամբ՝ նպատակ ունենալով անշարժ գույքի ձեռք բերումը հնարավորինս մատչելի դարձնել հաճախորդների համար: Այս տարի «Յունիբանկ»-ի կողմից տրամադրված հիփոթեքային վարկերի քանակը եւ ծավալը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է գրեթե 3 անգամ: Առաջնային շուկայում բանկն առաջարկում է ՀՀ դրամով հիփոթեքային վարկեր՝ 10,9% տարեկան տոկոսադրույքով եւ ընդամենը 10% կանխավճարով:

«Յունիբանկ»-ը շարունակել է ուշադրության կենտրոնում պահել նաեւ փոքր եւ միջին ձեռնարկությունների ֆինանսավորումը: Ժամանակակից պայմաններում բիզնեսի լուրջ զարգացումն առանց վարկավորման գրեթե անհնար է: ՓՄՁ-ներին մատչելի ռեսուրսներն անհրաժեշտ են կապիտալ ներդրումների, շրջանառու միջոցների համալրման, տրանսպորտի ձեռք բերման, արտադրության արդիականացման կամ ընթացիկ ծախսերի համար: Վարկային միջոցների շնորհիվ ապահովվում է արտադրական գործընթացների եւ վաճառքների շարունակականությունը, բարձրանում է ձեռնարկության արդյունավետությունն ու մրցունակությունը:

«Յունիբանկ»-ում բիզնես վարկ կարելի է ձեւակերպել եվրոյով՝ սկսած 5% տարեկան տոկոսադրույքից: Վարկը կտրամադրվի մինչեւ 5 տարի ժամկետով: Առկա է նաեւ արտոնյալ ժամկետ՝ մինչեւ 12 ամիս, որի ընթացքում կարելի է վճարել միայն տոկոսագումարը:

Փոքր բիզնեսին աջակցելու համար բանկն առաջարկում է «Միկրո էքսպրես» բիզնես վարկ, որի հիմնական առավելություններն են հաստատման գործընթացի ավտոմատացումը եւ գրավի պահանջի բացակայությունը:

Իրական հատվածի համար ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարձրացման համար «Յունիբանկ»-ը ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ կնքել է համագործակցության պայմանագիր Տնտեսության արդիականացման ծրագրի շրջանակներում վարկեր եւ ֆինանսական լիզինգ եւս տրամադրելու համար:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՆՈՐ ԿԱՐԳ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ՝ ԳԼԽԱՑԱՎԱՆՔ

Առաջին դասարանցիների առցանց ընդունելությունը խնդիր է գյուղական բնակավայրերում ապրող երեխաների ծնողների համար: Որքան էլ դժվար է պատկերացնել, բայց մեր երկրում կան շատ բնակավայրեր, որոնք ունեն թե՛ համացանցի հասանելության եւ թե՛ դրանից օգտվելու խնդիրներ:

Ի դեպ, հիշեցնենք, որ 2023-2024 թթ. ՀՀ պետական հանրակրթական դպրոցներում առաջին դասարանցիների հայտագրման գործընթացը կմեկնարկի հունիսի 12-ից եւ կիրականացվի 3 փուլով: Առաջին փուլով՝ հունիսի 12-ից հայտագրումը բաց կլինի բոլոր այն քաղաքացիների համար, որոնք ունեն որոշակի արտոնություններ՝

• տվյալ դպրոցում սովորող քույր, եղբայր ունեցող երեխաներին եւ տվյալ դպրոցի աշխատակիցների երեխաներին (այս կետի արտոնությամբ հայտագրումը կշարունակվի մինչեւ հունիսի 25-ը ներառյալ),

• ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ տվյալ դպրոցից մինչեւ տուն սպասարկման հետիոտնային հասանելիության շառավղով բնակվող՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ընդգրկված ընտանիքների, խնամակալության տակ գտնվող, հաշմանդամություն ունեցող կամ հաշմանդամություն ունեցող ծնողների երեխաներին,

• տվյալ ոլորտային օրենսդրությանը համապատասխան՝ ՀՀ տարածքում ներքին գործուղման հետեւանքով առնվազն 6 ամիս ժամկետով այլ բնակավայր տեղափոխված պետական համակարգի աշխատողների երեխաներին:

Երկրորդ փուլով հունիսի 27-ից առաջին դասարանցիների հայտագրման գործընթացը կիրականացվի ընդհանուր հիմունքներով՝ հայերենով ուսուցում իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների բոլոր առաջին դասարանցիների ընդունելության համար:

Երրորդ փուլով հուլիսի 4-ից հայտագրում կիրականացվի նաեւ օտարերկրյա քաղաքացիների, երկքաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (նրանց օրինական ներկայացուցչի) համար: Այն դեպքում, երբ ծնողներից մեկը թվարկված որեւէ խմբի ներկայացուցիչ է, իսկ մյուսը՝ ՀՀ քաղաքացի, հայտագրումը կարող է կատարվել ծնողի ընտրությամբ՝ ռուսերենով ուսուցմամբ դասարաններում:

Մեր զրուցակիցները հուսով են, որ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը ի վերջո կփորձի այնպիսի մեխանիզմներ մշակել, որը կհեշտացնի առաջին դասարանցիների ընդունելության կարգն, ու այս բյուրոկրատական քաշքշուկից իրենք զերծ կմնան: Այս պրոցեսը ոչ թե գլխացավանք կդառնա իրենց համար, այլ իրենք կկարողանան շատ մատչելի ձեւով իրենց զավակներին ընդունել դպրոցներում:

«Ժողովուրդ» օրաթերթն առաջիկայում կներկայացնի կրթության ոլորտի փորձագետի եւ ԿԳՄՍ նախարարության տեսակետն այս հարցի վերաբերյալ:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՄԱՐԶԻԿՆԵՐ

ՄԵԿՆԱՐԿՈՒՄ ԵՆ ԽՈՐՎԱԹԻԱՅՈՒՄ

Հայաստանի մարմնամարզության հավաքականի մի խումբ ներկայացուցիչներ մեկնարկում են World Challenge Cup-ում:

Խորվաթական Օսիջեկ քաղաքում կայանալիք World Challenge Cup-ի հերթական փուլին Հայաստանը կներկայացնեն Արթուր Դավթյանը, Արթուր Ավետիսյանը, Արթուր Թովմասյանը, Գագիկ Խաչիկյանը եւ Մանե Պողոսյանը: Մարզիչները կլինեն Հայկ Նազարյանը եւ Քնարիկ Բրսոյանը: Հայաստանի մարմնամարզության հավաքականի գլխավոր մարզիչ Հակոբ Սերոբյանը կլինի մրցավարների շարքում:

Մրցաշարը կմեկնարկի հունիսի 8-ին: Այս փուլին մասնակցում են Օլիմպիական խաղերի, աշխարհի եւ Եվրոպայի առաջնությունների մի շարք մրցանակակիրներ:

Հայաստանի մարմնամարզության հավաքականի անդամները 4 մեդալ էին նվաճել Բուլղարական Վառնա քաղաքում կայացած World Challenge Cup-ում: Աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն, Օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր Արթուր Դավթյանը ոսկե մեդալ էր նվաճել հենացատկի վարժությունում եւ բրոնզե մեդալներ՝ նժույգթափերում ու օղակների վարժությունում: Արթուր Ավետիսյանն էլ ոսկի էր նվաճել օղակների վարժությունում:

ՀՊԱՐՏՈՒԹՅԱՄԲ՝ ԴԵՊԻ ՏՈՒՆ

Աշխարհի 11-րդ ռակետ, ռուսաստանցի Կարեն Խաչանովը մեկնաբանել է մասնակցությունը Ֆրանսիայի բաց առաջնությունում: Հայ թենիսիստը քառորդ եզրափակիչում պարտվել էր աշխարհի երրորդ ռակետ, «Մեծ սաղավարտի» մրցաշարերի 22-ակի չեմպիոն, սերբ Նովակ Ջոկովիչին: Խաչանովը Պրոֆեսիոնալ թենիսիստների ասոցիացիայի դասակարգման աղյուսակում կվերադառնա լավագույն տասնյակ:

«Ոչ մի ափսոսանք չկա. եւս մեկ լավ մրցելույթ ունեցա «Մեծ սաղավարտի» մրցաշարում, շատ լավ փորձ էր: Մի քանի տարի ասում էի, որ նպատակս լավագույն տասնյակ վերադառնալն է: Գլխավոր նպատակ չէ, բայց, ամեն դեպքում, լավ է, որ հասա այդ նպատակիս: Տուն եմ վերադառնում հպարտության զգացումով»,- Խաչանովի խոսքը մեջբերում է մրցաշարի մամուլի ծառայությունը:

Խաչանովը 2019թ. նոյեմբերից հետո առաջին անգամ կլինի լավագույն տասնյակում: Պատմության մեջ առաջին անգամ տասնյակում կընդգրկվի երեք ռուսաստանցի՝ Խաչանով, Դանիիլ Մեդվեդեւ եւ Անդրեյ Ռուբլյով:

ԱՐՁԱԳԱՆՔ

Wildberries–Ը՝ ԹԱՆԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ինչպես արդեն գրել էինք, «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրությունը բազմաթիվ ահազանգեր է ստանում քաղաքացիներից ռուսական Wildberries ընկերության վերաբերյալ:

Ըստ քաղաքացիների բողոքների՝ Wildberries ընկերությունն անհասկանալի պատճառներով պարբերաբար թանկացնում է գնված ապրանքի վերադարձի գումարը: Այժմ, նախկին 450-դրամի փոխարեն, այն դարձել է 850 դրամ: Քաղաքացիներին զայրացրել է նաեւ այն հանգամանքը, որ երեխաների համար նախատեսված կաշաները, նպարեղենը չեն կարողանում հատով գնել, քանի որ Wildberries-ը փոխել է գնման ձեւը. այն այսուհետ պետք է գնել որոշակի քանակով, ինչը մեծ անհարմարություններ է պատճառել եւ վրդովմունք առաջացրել քաղաքացիների շրջանում: Քաղաքացիների ահազանգերին եւ մեր հարցադրումներին ի պատասխան՝ Wildberries ընկերությունը պարզաբանել է, որ ապրանքների քանակի սահմանափակում չեն դրել պատվերների մեջ: Միակ պայմանը պահեստում ապրանքի անհրաժեշտ քանակի առկայությունն է: Իսկ հետադարձ առաքման վճարների թանկացման մասին ընդգծել են. «Ինչ վերաբերում է հետադարձ առաքմանը, ապա դրա արժեքն աճել է ինչպես Ռուսաստանում, այնպես էլ բոլոր երկրներում, որտեղ ընկերությունը գործում է: Կախված ապրանքից՝ նվազագույն արժեքը սկսվում է 150 ռուբլուց եւ փոխակերպվում տեղական արժույթի. Հայաստանում 710 դրամ է»:

Եվ չնայած այս սահմանափակումներին եւ անհարմարություններին՝ Wildberries-ը մեծ պահանջարկ ունի Հայաստանում:

Լ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

● Հունիսի 9-ին Խամաճիկների պետական թատրոնում տեղի կունենա «Փոքրիկ իշխանը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1500 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԹՌԻՉՔՆԵՐ

ՀԱՐՑ. Flyone-ից տոմս եմ գնել, բայց ուզում եմ հետ տալ կամ գոնե օրը փոխել. ինչպե՞ս կարող եմ անել դա:

Արմեն Սերոբյան (52 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մեր www.flyone.eu կայքով առցանց գնված ավիատոմսը չեղարկելու կամ որոշ տվյալներ փոխելու համար ընտրեք Ձեզ հարմար եղանակը՝

- MyBookings-ից. մուտքագրելով պատվերի/ավիատոմսի համարը եւ Ձեր ազգանունը՝ սեղմե՛ք «Գտնել պատվերը» կոճակը: Ձեր պատվերի վերաբերյալ տեղեկատվությամբ «Տոմսերի փոխանակում» կոճակը հասանելի է էջի ներքեւում,
- «Իմ FLYONE» օգտահաշվից. գործընթացը նման է նախորդին, անհրաժեշտ է միայն մտնել օգտահաշիվ կամ ստեղծել Ձեր անձնական օգտահաշիվը, եթե այն բացակայում է: Կապ հաստատե՛ք մեզ հետ «Հետադարձ կապ» բաժնում՝ հետադարձ կապի միասնական ձեւի միջոցով՝ բոլոր անհրաժեշտ դաշտերը պարտադիր լրացնելու պայմանով:

Flyone Հայաստան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ավիատոմսի չեղարկումը կամ տվյալների փոփոխությունը կատարվում է կիրառվող սակագնի կանոններին համապատասխան, ինչը որոշ դեպքերում ենթադրում է տուգանքների կիրառում:

Էջը՝ ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. ԵՊՀ-ում ե՞րբ է կազմակերպվում առկա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելությունը:

Աիդա Մադոյան (26 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Առկա ուսուցմամբ (անվճար եւ վճարովի հիմունքներով) ասպիրանտուրայի ընդունելությունը սովորաբար կազմակերպվում է ընթացիկ տարվա մայիս-հունիս ամիսներին:

Երեւանի պետական համալսարան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ասպիրանտուրա ընդունվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ընդունման եւ մասնագիտական քննության անցկացման հստակ ժամկետները ԵՊՀ-ն դիմորդներին ներկայացնում է ՀՀ ԿԳՄՍՆ սահմանած ժամանակացույցը ստանալուց հետո՝ տարածելով համապատասխան հայտարարություն(ներ):

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Արամ Խաչատրյանի 120-ամյակի կապակցությամբ, Երեւանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ, Թումոյի այգում՝ բացօթյա բեմում, ներկայացվում են կոմպոզիտորի բալետային գործերը:

Բեմում Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի արտիստական կազմն ու նվագախումբը են՝ մաեստրո Կարեն Դուրգարյանի ղեկավարությամբ:

Արձագանքում է հանդիսատեսը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Տարածք	Ջերմաստիճան	Տարածք	Ջերմաստիճան
Շիրակ	+3 +8 / +19 +24	Արարատ	+14 +17 / +28 +30
Կոտայքի լեռներ	+4 +9 / +19 +22	Արմավիր	+12 +15 / +28 +30
Կոտայքի նախալեռներ	+13 +15 / +24 +26	Վայոց ձորի լեռներ	+4 +8 / +19 +22
Գեղարքունիք	+4 +9 / +18 +21	Վայոց ձորի նախալեռներ	+14 +17 / +27 +30
Լոռի	+11 +16 / +21 +26	Սյունիքի հովիտներ	+13 +17 / +23 +27
Տավուշ	+12 +15 / +21 +25	Սյունիքի նախալեռներ	+9 +12 / +16 +19
Արագածոտնի լեռներ	+3 +7 / +19 +22	Արցախ	+14 +17 / +22 +27
Արագածոտնի նախալեռներ	+13 +16 / +24 +28	Երեւան	+13 +15 / +27 +29

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **7.6.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*